«Այբ կրթական հանգույց» հիմնադրամ
Երևան 0052, Թբիլիսյան խճ. 11/11
Հեռ.՝ +374 98 546 497, +374 93 012 015
welcome@aybschool.am
www.aybschool.am

Արձանագրություն
№ ASBT08-2607 (0207)

«Այբ կրթական հանգույց» հիմնադրամի 8-րդ գումարման հոգաբարձուների խորհրդի նիստի

Ամսաթիվ՝	02 հուլիսի 2026 թ.
Անցկացման վայր՝	«Այբ» դպրոց, ՀՀ, ք. Երևան, Թբիլիսյան խճուղի 11/11 / Zoom հարթակ
Նիստի սկիզբ՝	18:00

ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ

Հոգաբարձուների խորհրդի (ՀԽ) անդամներ՝

1. Սարգիս Բաղալյան - ՀԽ նախագահ (առկա),
2. Ջուլիետա Կճանյան (առկա),
3. Հակոբ Պետրոսյան (առկա),
4. Հայկ Եգանյան (առցանց),
5. Ռուբեն Հարությունյան (առցանց),
6. Տիգրան Բունիաթյան (առցանց):

Նիստին չեն մասնակցել՝

7. Տիգրան Հարությունյան,
8. Վազգեն Յակուբյան
9. Ռաֆֆի Ֆըստըգճյան
10. Աշոտ Մկրտչյան
11. Արամ Կայֆաջյան

Նիստին մասնակցել են հոգաբարձուների խորհրդի տասնմեկ անդամներից վեցը, ինչն ապահովում է որոշումների կայացման համար անհրաժեշտ քվորումը:

Նիստի քարտուղար ընտրվեց Էլլա Ավագյանը (առկա):

Առանց ձայնի իրավունքի նիստին մասնակցել են.
Դավիթ Սահակյան (Գործադիր տնօրեն: Առցանց:),
Սիլվիա Նաջարյան (Կրտսեր դպրոցի տնօրեն: Առցանց:),
Մերի Հովսեփյան (Ավագ դպրոցի տնօրեն և Ակադեմիական տնօրեն: Առկա:),
Հայկ Պողոսյան (Գործառնական տնօրեն: Առկա:),
Վահե Գաբրիելյան («Այբ» կրթական հիմնադրամի տնօրեն: Առցանց:)

Հարց 1. Օրակարգի հաստատում: Հարցեր, որոնք այս օրակարգում ընգրկված չեն եղել: Որոշում՝ հարց 1 *1. Հաստատել ՀԽ-ի նիստի 2026 թվականի հուլիսի 2-ի օրակարգը:* Որոշումը կայացված է միաձայն:
Հարց 2. A1: Ռազմավարության իրականացման առաջընթացի զեկույց
Հարց 3. A2: Տնօրենի ամփոփ զեկույց՝ նիստերի միջև:
Հարց 4. B3: NPS/NSAT/CSI հետազոտությունների հաշվետվություն:
Հարց 5. Արցախցի աշակերտ - Լենա Պետրոսյան
Որոշում Աշակերտ Լենա Ալենի Պետրոսյանին 2026-2027 ուսումնական տարվանից տրամադրել արցախցի ընտանիքների համար նախատեսված քվոտաներով և 3-րդ դասարանում առկա թափուր տեղը՝ նրա վրա տարածելով արցախցի ընտանիքների վերաբերյալ դպրոցում գործող բոլոր որոշումները՝ այդ թվում ֆինանսական աջակցության ծրագրին դիմելու իրավունքը: *Որոշումը կայացված է միաձայն:*
Հարց 6. «Զեմպիոն» ՀԿ-ի հետ համագործակցության պայմանագրի վերջնական մշակման ներկայացում:
Հարց 7. ՀԽ-ի հաջորդ նիստին առաջարկվող հարցեր: Բոլոր հարցերը ներկայցնել հոկտեմբերի 1-ի նիստին, եթե այլ բան չի նշված հանձնարարության վերաբերյալ:
Նիստի ավարտ Հանդիպումն ավարտվեց ժամը 20:00-ին:

ՀԽ նախագահ

Սարգիս Բաղալյան _____

Նիստի քարտուղար

Էլլա Ավագյան _____